ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29-ը օգոստոսի 2017թ.
ժամը 11^{00}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հրավերով նախատատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին. բացառությամբ հետևյալ դեպքի. մասնակցի կողմից ներկայացված Հավելված N 6.1-ում նշված չեն 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների՝ փակ տարողությունում պահպանման ժամկետների վերաբերյալ տվյալները, որոնց ներկայացումը նախատեսված է ընթացակարգի հրավերով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկեց անհամատասխանությունները և ներկայացված տեխնիկական բնութագիրը հանձնաժողովի կողմից գնահատվեց հրավերի պահանջներին բավարարող:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 31.08.2017թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/22» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Ն. Հարությունյան
Գնահատող	Ա. Հակոբյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան